

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

2013 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԽԹԱՆՄԱՆՆ
ՈՒՂՂՎԱԾ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ՑԱՆԿԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետությունում առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված
նազմավարական ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների
ցանկը և ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի.

2. Սահմանել, որ առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված աշխատանքները
համակարգող հանրապետական հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է
Հայաստանի Հանրապետության վարչապետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող
օրվանից:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ
ԽԹԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) կողմից հանրային առողջապահության հիմնարար ուղղություններ են սահմանվել բնակչության (հանրային) առողջության պահպանումը, խթանումը և հիվանդությունների կանխարգելումը: Դրանք պահանջում են համակարգված և համապարփակ գործողություններ՝ ուղղված վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը, դրանց բեռի, ինչպես նաև հիվանդացության և մահացության նվազեցմանը:

2. Բնակչության առողջության պահպանմանը, ամրապնդմանը և առողջության խթանմանն ուղղված առանցքային քաղաքականություններից և գործողություններից են առողջ ապրելակերպի ձևավորումը և հանրային առողջապահական ծառայությունների մատչելիությունը, հասանելիությունը և որակի բարձրացումը:

3. Առողջ ապրելակերպի ձևավորումը կարևորագույն առողջապահական կարողություն է, որի ուղղությամբ զգալի և բազմոլորտ գործողություններ են անհրաժեշտ:

4. Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների (այսուհետ՝ ՎՀ) (ինչպես նաև քիմիական և ճառագայթային գործոններով պայմանավորված դեպքերի) նկատմամբ արդեն իսկ մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 19-ի N 15 արձանագրային որոշմամբ հաստատվել է նման ծրագիր: Նույն որոշմամբ հաստատվել է նաև Հայաստանի Հանրապետությունում վարակիչ գերակա

հիվանդությունների (այսուհետ՝ ՎՀ), (ինչպես նաև քրոնիկական և ճառագայթային գործոններով պայմանավորված ախտահարումների) նկատմամբ բնակչության (առանձին քանակակազմերի) իրազեկման, բժշկահիգիենիկ գիտելիքների տարածման և առողջ ապրելակերպի քարոզչության միջոցառումների ծրագիրը:

5. Ողջ աշխարհում բնակչության առողջության համար առավել մեծ բեռ են ոչ վարակիչ հիվանդությունները (այսուհետ՝ ՈՎՀ): Աշխարհում տարեկան 36 միլիոն մահվան դեպք է արձանագրվում ոչ վարակիչ հիվանդություններից, որոնք հանդիսանում են բնակչության հիմնական մահվան պատճառը:

6. Հիվանդությունների տարածվածության և մահացության ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ Հայաստանի բնակչության շրջանում նույնպես առավել տարածված են ՈՎՀ-ը:

7. Հիվանդությունների, ինչպես նաև նշված հիվանդություններից առաջացած վաղաժամ մահերի մի զգալի մասը հնարավոր է կանխարգելել առողջ ապրելակերպի համար համապատասխան նպաստավոր պայմաններ ապահովելու միջոցով: Վիճակագրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 15 և բարձր տարիքի բնակչության շրջանում առավել տարածված են՝ ծխախոտի օգտագործում՝ 25,6%, (ըստ սեռային բաշխվածության՝ տղամարդիկ՝ 52%, կանայք՝ 3%), գիրություն և ճարպակալում՝ 49%, ֆիզիկական թերակտիվություն՝ 17,5%, ալկոհոլի օգտագործում՝ 8,2%, (տղամարդկանց մոտ՝ 15%):

8. Առողջ ապրելակերպը ներառում է մանկական տարիքին համապատասխան ֆիզիկական ակտիվությունը, առողջ և անվտանգ սննդի օգտագործումը, առողջ և անվտանգ միջավայրի ձևավորումը, ծխախոտի օգտագործման նվազեցումը, ալկոհոլի չարաշահման նվազեցումը, դեռևս վաղ մանկական հասակից սկսած վերը նկարագրված առողջ ապրելակերպն ապահովող սովորույթների ձևավորումը և այլն: Բնակչության շրջանում առողջ ապրելակերպի սկզբունքների ներդրման և ամրապնդման միջոցով հնարավոր կլինի կանխարգելել հիվանդությունների զգալի մասը:

9. Կառավարելի վարակիչ հիվանդությունների կանխարգելման խնդրում ևս չափազանց կարևոր է առողջ ապրելակերպի՝ հանրային և անձնական հիգիենայի պահպանման նորմերի քարոզչությունը:

10. Ներկայում ավելի մեծ թվով երկրներ ազգային մակարդակում իրականացնում են միջոցառումներ՝ ուղղված բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորմանը և, հետևաբար, բնակչության առողջության խթանմանը: Բարձր եկամուտ ունեցող երկրներին, ինչպիսիք են Ամերիկայի Միացյալ Նահանգները (այսուհետ՝ ԱՄՆ), Եվրոպական Միության (այսուհետ՝ ԵՄ) երկրները, Ավստրալիան, Կանադան, միանում են միջին և ցածր եկամուտ ունեցող երկրները՝ Նոր-Չելանդիա, Կորեա, Թուրքիա, Ռուսաստանի Դաշնություն, Ղազախստան, Թայլանդ և այլ:

11. Միջազգային առողջապահական կազմակերպությունների, հեղինակավոր գիտնականների և ոլորտի փորձագետների գնահատմամբ առողջ ապրելակերպի ձևավորումը հիվանդությունների կանխարգելման ամենաարդյունավետ և քիչ ծախսատար միջոցներից մեկն է: Ավելին, առողջ ապրելակերպի ամրապնդմանն ուղղված միջոցառումները լավագույն ներդրումն են ազգաբնակչության առողջության մեջ և որպես արդյունք անդրադառնում են երկրի տնտեսական բարեկեցության վրա:

12. Առողջ ապրելակերպի արմատավորմանն ուղղված գործողությունները շարունակական բնույթ են կրում: Դրանք անհրաժեշտ է պարբերաբար վերանայել և, հարկ եղած դեպքում, կատարել ռազմավարական փոփոխություններ, կազմել աշխատանքային ծրագրեր՝ որոշակի ժամանակահատվածի համար: Գործողությունների արդյունավետությունը կախված է ինչպես դրանց իրականացման, այնպես էլ դիտարկման և գնահատման արդյունավետ համակարգերի առկայությունից:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

13. Ծրագրի նպատակն է՝ մշակել և ներդնել մեխանիզմներ՝ ուղղված առողջ ապրելակերպի խթանմանը, որը կբերի ՈՎՀ-ից վաղաժամ մահացության ու հիվանդացության նվազեցմանը, կնպաստի հոգեկան առողջության բարելավմանը, տրավմատիզմի նվազեցմանը:

14. Ապրելակերպի ձևավորման և, ամենակարևորը, հասարակության լայն զանգվածների շրջանում դրա ամրապնդման համար պետք է լուծել ստորև թվարկված հիմնական խնդիրները՝

1) ապահովել առողջության համար հիմնական վարքագծային ռիսկերի ենթարկվող անձանց թվաքանակի նվազեցմանն ու առողջ ապրելակերպ վարող անձանց թվաքանակի մեծացմանն ուղղված նպատակային քաղաքականության իրականացումը.

2) ապահովել բնակչության իրազեկվածությունը ողջ կյանքի ընթացքում՝ անառողջ ապրելակերպ վարելու հետևանքով առաջացող վտանգների մասին.

3) ապահովել անխափան փոխհամաձայնեցված շարունակական աշխատանք ոչ միայն առողջապահական, այլև համապատասխան այլ ոլորտներում, մասնավորապես, կրթության, սպորտի և երիտասարդության, լրատվության և այլն.

4) ապահովել առողջապահական ոլորտի աշխատանքների համաչափ իրականացումը բոլոր մակարդակներում՝ ազգային, մարզային, քաղաքային և համայնքային՝ ներգրավելով հասարակական և միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հնարավորինս լայն շրջանակներ:

III. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

15. Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ԱՎԾ) պաշտոնական տվյալների համաձայն 2012 թվականի ավարտին Հայաստանի բնակչությունը 3.274,3 հազար է, այդ թվում քաղաքայինը՝ 2.09,6.0 և գյուղականը՝ 1.178,3 հազար:

16. 2012 թվականի տարեսկզբի դրությամբ Հայաստանի Հանրապետության բնակչության միջին տարիքը 35.3 տարի է, արական սեռի համար՝ 33,5, իսկ իգականի համար՝ 36,9 տարի:

17. Հայաստանի Հանրապետությունում ծննդյան պահից հաշվարկված կյանքի սպասվող տևողությունը (2011 թվականին՝ 74,2 տարի) զիջում է իր հիմնական հարևան պետությունների նույն ցուցանիշը: Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) գնահատմամբ ծննդյան պահից կյանքի

սպասվող տևողությունը Հայաստանում իրականում շուրջ 4-ից 5 տարով զիջում է պաշտոնապես հրապարակվածին:

18. Հիվանդացության և մահացության ցուցանիշներն արտացոլում են բնակչության առողջության վիճակը և ուղղակիորեն ու անուղղակիորեն կախված են տարատեսակ գործոններից՝ սոցիալտնտեսական վիճակ, սեռ, տարիք, ժառանգական նախատրամադրվածություն, և, անշուշտ, ապրելակերպ:

19. Հիվանդացության և մահացության պատճառների ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանի Հանրապետության բնակչության մահացության պատճառների կառուցվածքում ՈՎՀ-ը կազմում են 90% (արյան շրջանառության համակարգի հիվանդությունները զբաղեցնում են առաջին տեղը՝ 48,0%, չարորակ նորագոյացությունները կազմում են 19,9%, մարսողական օրգանների հիվանդությունները՝ 6,3%, շնչառական օրգանների հիվանդությունները՝ 6,0%, վնասվածքները և թունավորումները՝ 4,9% և շաքարային դիաբետը՝ 4,8%):

20. Հայաստանի Հանրապետությունում 2012 թվականին չարորակ նորագոյացությունների տարածվածությունն ընդհանուր հիվանդացության մեջ կազմել է 21%: Միևնույն ժամանակ, չարորակ նորագոյացություններով հիվանդացության և դրանցից մահացության ցուցանիշները հանրապետությունում կայուն կերպով աճում են՝ կապված նաև վարվող անառողջ կենսակերպի և բնապահպանական խնդիրների լայն տարածվածության հետ:

21. Հայաստանի Հանրապետությունում, հատկապես տղամարդկանց շրջանում, առավել տարածված են շնչափողի, բրոնխների և թոքերի քաղցկեղները, որոնք մեծապես պայմանավորված են անառողջ ապրելակերպի վարմամբ (ծխախոտի օգտագործում): Այսպես, 2001-2011 թվականների ընթացքում տղամարդկանց շրջանում շնչափողի, բրոնխների և թոքերի չարորակ նորագոյացություններից մահացության ցուցանիշը անընդհատ աճել է՝ 47,1-ից հասելով մինչև՝ 64,3-ի (1991 թվականի նկատմամբ՝ 35,8-ից մինչև 64,3-ի):

22. Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր տարի չարորակ նորագոյացությունների պատճառով հաշմանդամ են դառնում շուրջ 3.000 մարդ, որը

հանգեցնում է 75,0 մլն. դրամը գերազանցող տարեկան տնտեսական վնասի: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ չարորակ նորագոյացություններով հիվանդացության ցուցանիշների աճման վերոնշյալ բարձր ցուցանիշների պահպանման պարագայում 2010 թվականին տարեկան տնտեսական վնասը կազմել է մոտ 250,0 մլն. դրամ:

23. Վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում արյան շրջանառության հիվանդություններից առաջացած մահացության ցուցանիշը 100.000 բնակչի հաշվով աճել է մոտ 1,2 անգամ (1990 թվականին՝ 305,9, իսկ 2011 թվականին՝ 407,4): Հարկ է նշել, սրտանոթային հիվանդություններից մահացության կայուն դանդաղ աճը 2008 թվականից սկսած որոշակիորեն կայունացել է՝ կազմելով 2008 թվականին՝ 423, 2009 թվականին՝ 417, 2010 թվականին՝ 419 և 2011 թվականին՝ 407,4՝ 100.000 բնակչի հաշվով:

24. Սրտանոթային հիվանդություններից հաշմանդամությամբ ընթացող կյանքի կորցրած տարիների (այսուհետ՝ ՀԸԿՏ) ցուցանիշը Հայաստանում կազմում է 4.306՝ 100 000 բնակչի հաշվով (կամ այդ հիվանդությունների հետևանքով տարեկան մոտ 350 կյանքի կորուստ):

25. Հայաստանի Հանրապետությունում 1990 թվականի հետ համեմատած 2012 թվականին շաքարային դիաբետից ընդհանուր հիվանդացությունը աճել է 1,5 անգամ, իսկ 2011 թվականին նույն այս հիվանդությունից մահացությունը աճել է շուրջ 3 անգամ՝ հասնելով 4,8%:

26. Վերը նշված հիվանդությունների համար վարվող ապրելակերպն ունի վճռորոշ դեր:

27. Ապացուցված է, որ վարքագծային այնպիսի ռիսկի գործոնները, ինչպիսիք են ծխախոտի օգտագործումը, անառողջ սնունդը, ֆիզիկական ակտիվության բացակայությունը և ալկոհոլի չարաշահումը, ի վերջո հանգեցնում են մարմնի ավելորդ քաշի և գիրության, զարկերակային գերճնշման և արյան մեջ խոլեսթերինի և ցածր խտության լիպոպրոտեիդների մակարդակի բարձրացման:

28. Բնակչության առողջության վիճակի վրա ռիսկի գործոնների ազդեցությունը ոչ թե արտահայտվում է միանգամից, այլ միայն տարիներ անց: Համաձայն Հայաստանի Հանրապետությունում իրականացված Հայաստանի առողջապահության համակարգի գործունեության գնահատման հետազոտության՝ բնակչության շրջանում 2007-2012 թվականների ընթացքում վարքագծային և կենսաբանական ռիսկի գործոնների տարածվածությունը բավական բարձր է: Այսպես, Հայաստանում 2012 թվականին 20 տարեկանից բարձր տարիքի բնակչության շրջանում առավել տարածված են՝ զարկերակային բարձր ճնշում՝ 37%, ծխախոտի ամենօրյա օգտագործում՝ 26% (ըստ սեռային բաշխվածության՝ տղամարդիկ՝ 55% (2009 թվականին՝ 58%) և կանայք՝ 3%), գիրություն և ճարպակալում՝ 57% (2009 թվականին՝ 54%), ֆիզիկական թերակտիվություն՝ 50%, տղամարդկանց կողմից ակոհոլի օգտագործում՝ 12% (2009 թվականին՝ 17%), կերակրի աղի ավելցուկային օգտագործում՝ 20% (2007 թվականին՝ 12%):

29. Մինևույն ժամանակ, հանրապետության 20 տարեկան և ավելի բարձր տարիքի բնակչության մեծամասնությունը ընդհանուր առմամբ իրազեկված է ՈՎՀ-ների առաջացնող ռիսկի գործոնների մասին: Մասնավորապես, բնակչության շրջանում առավել բարձր է տեղեկացվածությունը ծխախոտի օգտագործման (94%՝ 2009 թվականին), երկրորդային ծխի (96%՝ 2012 թվականին) և ֆիզիկական թերակտիվության վնասակար ազդեցության մասին (92,6%): Շատ ավելի ցածր է իրազեկվածությունն այլ ռիսկի գործոնների վերաբերյալ, ինչպիսիք են՝ գիրության, արյան խուլեսթերինի (29%) և գլյուկոզայի (39%) բարձր մակարդակների մասին:

30. Թե՛ մահացության, թե՛ հիվանդացության պատճառների մեծ մասը կապված է դեռահասների առողջության հարցերին առնչվող վարքագծի հետ: Անառողջ սնունդը և սննդակարգը, ֆիզիկական թերակտիվությունը, ծխախոտի օգտագործումը, ռիսկային սեռական վարքագիծը դեռահասների շրջանում առավել տարածված խնդիրներից են, ընդ որում՝ դեռահասային տարիքում ձևավորված առողջական վարքագիծը առանցքային նշանակություն ունի ողջ կյանքի համար:

31. Դեռահասության շրջանում նշված խնդիրների ի հայտ գալը հասուն տարիքում ՈՎՀ-ի զարգացման ռիսկի պատճառ է:

32. Հայաստանում իրականացված հետազոտության արդյունքները վկայում են, որ դեռահասների առողջության և առողջական վարքագծի վրա ազդում են տարաբնույթ գործոններ, ներառյալ՝ դեռևս պահպանվող ազգային ավանդույթները, անցումային փուլի դժվարությունները, տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը և ներխուժումը առօրյա կյանք և այլն, որոնք նպաստել են նրանց շրջանում որոշ առողջական խնդիրների առաջացմանը, խթանել են Հայաստանի դեռահասների վարքագծի յուրահատուկ պատկերի զարգացումը:

33. Անառողջ սննդակարգը շարունակում է պահպանվել դեռահասների շրջանում: Հետազոտությանը մասնակցած երեխաների կեսը չի նախաճաշում, չարաշահում է քաղցրավենիքը և քաղցր գազավորված ըմպելիքները (հատկապես՝ երևանաբնակ դեռահասները): Նման սննդակարգը, «դատարկ» կալորիաների առատությունը բացասաբար են անդրադառնում երեխայի առողջության վրա:

34. Հետազոտությունները վկայում են, որ դեռահասները քիչ են մարզվում, չեն մասնակցում ֆիզիկական կուլտուրայի դասերին, զգալի ժամանակ են անցկացնում հեռուստացույցի և համակարգչի առջև կամ դաս պարապելիս: Նստակյաց ապրելակերպը և անառողջ սննդային սովորույթները կարող են պատճառել տարաբնույթ առողջական խնդիրներ, մասնավորապես՝ մարմնի ավելորդ քաշի և հետագայում գիրության զարգացման պատճառ դառնալ:

35. Ծխախոտի օգտագործումը և երկրորդային ծխի ազդեցությունը լուրջ ռիսկեր են պարունակում դեռահասների համար: Համաձայն ուսումնասիրությունների 13-15 տարեկան դպրոցականների 3,5% ընթացիկ ծխողներ են (6,1%՝ տղաներ և 1,2%՝ աղջիկներ): Երկրորդային ծխի ազդեցությունը լուրջ գործոն է Հայաստանի Հանրապետության համար, որտեղ հակածխախոտային օրենսդրությունը իր առաջին քայլերն է անում, իսկ երկրորդային ծխի վնասների հանրային գիտակցումը դեռևս բարձր չէ:

36. Վերջին տարիներին երկրում իրականացվել են առավել տարածված ՈՎՀ-ի դեմ պայքարի մի շարք միջոցառումներ: Մասնավորապես Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի նիստով

հավանության է արժանացել «Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 11 արձանագրային որոշումը:

37. 2004 թվականին Հայաստանի Հանրապետության ազգային ժողովը վավերացրել է ԱՀԿ-ի «Ծխախոտի դեմ պայքարի մասին շրջանակային կոնվենցիան»՝ առողջապահության ոլորտում գործող միակ միջազգային գլոբալ համաձայնագիրը, իսկ 2005 թվականից սկսած շարունակաբար կառավարության կողմից ընդունվել են ծխելու դեմ պայքարի ազգային ծրագիր: Գործում են մի շարք իրավական ակտեր՝ ուղղված երեխաների և դեռահասների առողջության պահպանման հիմնախնդիրներին: Այնուամենայնիվ, առողջ ապրելակերպի խթանման ուղղությամբ դեռևս անհրաժեշտ է իրականացնել որոշակի նպատակային գործողություններ:

IV. ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԽԹԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

38. Առողջության համար հիմնական վարքագծային ռիսկերի ենթարկվող անձանց թվաքանակի նվազեցմանն ու առողջ ապրելակերպ վարող անձանց թվաքանակի մեծացման ապահովմանը նախատեսվում է հասնել իրականացվող միջոցառումների միջոցով՝

39. **Ռազմավարական ուղղություն 1.** Առողջ ապրելակերպի ներդրմանը և իրականացմանն ուղղված գործողությունների կառավարման համակարգի ստեղծում:

1) Ռազմավարական ուղղությանը հասնելուն ուղղված միջոցառումներ

ա. Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված գործողությունները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծում և աշխատակարգի հաստատում՝ ապահովելով համագործակցությունը միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ:

բ. Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված գործողությունների համակարգման նպատակով մշտական գործող աշխատանքային խմբի ձևավորում:

գ. Նախատեսվող միջոցառումների գործադրման մոնիթորինգի համակարգի ձևավորում և ներդնում (ապահովելով համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ):

դ. Միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ ամենամյա հաշվետվության տեղադրում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կայք էջում:

40. Ռազմավարական ուղղություն 2.Առողջության խթանմանը նպաստող օրենսդրության կատարելագործում:

1) Ռազմավարական ուղղությանը հասնելուն ուղղված միջոցառումներ

ա. Սոցիալական գովազդի տեղակայման կանոնակարգման վերաբերյալ «Գովազդի մասին», «Լիցենզավորման մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխությունների փաթեթի մշակում:

բ. «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում համապատասխան փոփոխությունների և լրացումների փաթեթի մշակում:

գ. Ալկոհոլի գովազդի սահմանափակման նպատակով (արտաքին, հեռուստատեսությամբ և ռադիոյով իրականացվող գովազդի արգելք) «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում համապատասխան փոփոխությունների փաթեթի մշակում:

դ. Ալկոհոլային խմիչքների չարաշահումը կանխարգելելու նպատակով գործողությունների ծրագրի մշակում:

ե. Նախադպրոցական, դպրոցական հաստատություններում գազավորված ըմպելիքների իրացման սահմանափակմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով օրենսդրական բարեփոխումների իրականացում:

զ. Ճարպեր, կենդանական յուղեր և մեծ քանակությամբ աղ պարունակող սննդի օգտագործման կարգավորման նպատակով գնային և հարկային քաղաքականության վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մշակում:

է. Կրթական, բուժական և այլ հաստատություններում երեխաների և դեռահասաների համար նախատեսվող և իրացվող սննդի ու ըմպելիքների կարգավորման մասով իրավական ակտերի նախագծերի մշակում:

ը. Չանգվածային լրատվամիջոցներով բռնությունը, անառողջ և վտանգավոր ապրելակերպը խթանող հեռուստաֆիլմերի հասանելիության նվազեցմանն ուղղված, ինչպես նաև նշված ապրելակերպի ցուցադրման սահմանափակումներին ուղղված իրավական ակտերի նախագծերի մշակում:

թ. Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված ծրագրերի կայունությունն ապահովելու նպատակով ծրագրերի ֆինանսավորման մեխանիզմների մշակում:

41. **Ռազմավարական ուղղություն 3.** Առողջ ապրելակերպի քարոզչությանն ուղղված առողջ ապրելակերպը սատարող մասնագիտացված ծառայությունների զարգացում:

1) Ռազմավարական ուղղությանը հասնելուն ուղղված միջոցառումներ

ա. Ռիսկի գործոնների (օրինակ՝ ծխախոտի, ալկոհոլի օգտագործում, ֆիզիկական թերակտիվություն, ավելցուկային քաշի տարածվածություն), ապրելակերպի վրա ուղղակի և անուղղակի ազդեցություն ունեցող այլ գործոնների (օրինակ՝ բռնության ցուցադրում կամ կիրառում, երկրորդային ծխի ազդեցություն և այլն), ինչպես նաև համապատասխան մասնագետների հաշվառման տեղեկատվական համակարգի ստեղծում:

բ. Առողջապահության համակարգի աշխատողների, ինչպես նաև, մանկավարժների, քաղաքականություն մշակող անձանց և այլ խմբերի կարծիքի ձևավորմանն ուղղված՝ առողջության խթանման վերաբերյալ ուսումնական ծրագրերի մշակում:

գ. Առողջապահության բնագավառի աշխատողների՝ բժիշկների, միջին բուժանձնակազմի, ինչպես նաև ուսուցիչների, համայնքների և սոցիալական ոլորտի աշխատողների վերապատրաստման համար ուսումնական ծրագրերի մշակում:

դ. Բժշկական հաստատություններում կախվածությունների ախտորոշման սկզբունքների ևսնունդ, ալկոհոլ, ֆիզիկական ակտիվ ապրելակերպի տարբեր տարիք և առողջական վիճակ ունեցող անձանց համար խորհրդատվության

համակարգերի, ինչպես նաև բուժման ծրագրերի ստեղծում՝ շեշտը դնելով առաջնային բժշկական օգնության հաստատությունների վրա:

ե. Ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների օգտագործման հետևանքով առաջացած կախվածության բուժման նորագույն և արդյունավետ մոտեցումների վերաբերյալ չափորոշիչների մշակում:

զ. Առողջ ապրելակերպը խթանող միջոցառումների մշակում և ներդրում, և դրանց ընդգրկում ազգային, առողջապահական այլ ծրագրերում և ռազմավարություններում, այդ թվում՝ առաջնային բուժօգնության, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, ալկոհոլիզմի և թմրամոլության դեմ պայքարի, վերարտադրողական առողջության պահպանման, դեռահասների առողջության պահպանման և այլն:

42. Ռազմավարական ուղղություն 4.Առողջ ապրելակերպի դրական կողմերի, արդյունավետության և օգտակարության վերաբերյալ ուսուցում, կադրերի պատրաստում և բնակչության իրազեկում:

1) Ռազմավարական ուղղությանը հասնելուն ուղղված միջոցառումներ

ա. Կրթական և լայն հասարակության իրազեկման ծրագրերի մշակում:

բ. Լայն հասարակայնության, հատկապես բնակչության առանձին խմբերի (կանայք, երեխաներ, երիտասարդներ և այլն) իրազեկում:

գ. Համագործակցություն հանրային առողջապահական բնագավառում գործող հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ և համատեղ հատուկ կրթական ծրագրերի մշակում և իրագործում:

դ. Համագործակցություն զանգվածային լրատվամիջոցների հետ և նրանց միջոցով իրազեկման միջոցառումների իրականացում, ինչպես նաև իրենց համար հատուկ կրթական ծրագրերի մշակում և իրագործում:

ե. Մասնավոր և հանրային կառույցների միջև համագործակցության շրջանակների լայնացում:

զ. Առողջ ապրելակերպի, մասնավորապես՝ ֆիզիկական ակտիվության խթանմանն ուղղված միջոցառումների կազմակերպման ուղղությամբ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցություն, ինչպես նաև

իրենց համար առողջ ապրելակերպի վերաբերյալ հատուկ ծրագրերի ու ուղեցույցներ մշակում և իրագործում:

է. «Դպրոցական սնունդ» ծրագրի մշակում, որն աջակցող ծրագրերի շրջանակներում նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների համարկնախատեսի օրական անհրաժեշտ մթերքներ ստանալու հնարավորություն:

ը. Յորենի այլուրի հարստացման վերաբերյալ հասարակական համախմբման և հաղորդակցության քարոզարշավի իրականացում:

թ. Նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման հարցերի վերաբերյալ քարոզարշավի իրականացում, ծնողների համար կրթական ծրագրերի իրականացում, խորհրդատվական համակարգի և ծնողների կրթական կենտրոնների ստեղծում:

ժ. Սնուցման հարցերի վերաբերյալ բուժաշխատողների գիտելիքների հզորացում:

43. Ռազմավարական ուղղություն

5.Դպրոցներում առողջ ապրելակերպի խթանում՝ դեռահասների առողջապահական ծառայությունների հզորացման միջոցով:

1) Ռազմավարական ուղղությանը հասնելուն ուղղված միջոցառումներ

ա.Դպրոցներում «Առողջ ապրելակերպ» կրթական ծրագրի իրականացման գնահատում և առաջարկությունների մշակում:

բ. Երիտասարդներին բարյացակամ ծառայությունների կենտրոնների գործունեության գնահատում և առողջ ապրելակերպի խթանման նպատակով առաջարկությունների փաթեթի մշակում:

գ. 2013-2014 թվականներին դպրոցներում առողջ ապրելակերպի խթանման նպատակով դեռահասների առողջապահական ծառայությունների մոդելի փորձնական ծրագրի իրականացում:

դ. Դեռահասների առողջապահական ծառայությունների մոդելի պիլոտային ծրագրի գնահատում և ազգային ռազմավարության մշակում:

44. Ռազմավարական ուղղություն 6. Առողջ ապրելակերպի խթանման

ուղղությամբ նախատեսվող միջոցառումների գործադրման մոնիթորինգի

համակարգի ձևավորում և ներդնում՝ ապահովելով համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ:

1) Ռազմավարական ուղղությանը հասնելուն ուղղված միջոցառումներ

ա. Միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ ամենամյա հաշվետվության կազմում:

բ. Իրականացվող ծրագրերի վերաբերյալ կիսամյակային և տարեկան զեկույցների պատրաստում և հրապարակում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական կայքէջում:

գ. Պարբերաբար օրենսդրության բացերի վերլուծության, ռիսկի գործոնների տարածվածության և դրանից բխող հետևանքների գնահատման մասին զեկույցումների կանոնավոր հրապարակում:

45. Նշված միջոցառումները պետք է իրականացվեն մասնակցային և համարժեք կառավարման և դիտարկման միջոցով, որի նպատակն է ապահովել ծրագրի անխափան փոխհամաձայնեցված շարունակական աշխատանքը ոչ միայն առողջապահական, այլ նաև համապատասխան այլ ոլորտներում, մասնավորապես՝ կրթության ու սպորտի և երիտասարդության: Աշխատանքները պետք է համաչափ իրականացվեն բոլոր մակարդակներում՝ ազգային, տարածաշրջանային, քաղաքային և համայնքային՝ ներգրավելով հասարական, միջազգային, ինչպես նաև մասնավոր ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունները: Միաժամանակ, պետք է զուգահեռաբար իրականացվեն ծրագրի գործադրման ընթացիկ իրավիճակի ու փոփոխությունների գնահատում և առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված աշխատանքի ճշգրտում:

V. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

46. Ծրագրի գործողությունների ֆինանսավորումը նախատեսվում է հետևյալ աղբյուրներից՝

- 1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

- 2) Միջազգային կազմակերպությունների կողմից նպատակային ֆինանսավորում.
- 3) Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացվող մասնավոր կազմակերպությունների միջոցների հաշվին.
- 4) Հասարակական կազմակերպությունների կողմից նպատակային ֆինանսավորում.
- 5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող այլ ֆինանսական աղբյուրներ:

VI. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

47. Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված ռազմավարական ծրագրի մոնիթորինգը և վերահսկողությունն իրականացվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և շահագրգիռ գերատեսչությունների կողմից՝ յուրաքանչյուրն իր իրավասության շրջանակներում:

48. Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված նպատակային ծրագրի մոնիթորինգն իրականացվում է վարչական վիճակագրական հաշվետվություններով՝ սահմանված տեղեկատվական հոսքերով, ինչպես նաև հատուկ ուսումնասիրությունների և հետազոտությունների ժամանակ ստացած արդյունքների հիման վրա:

49. Մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ կատարվում են եռամսյակային և տարեկան վերլուծություններ և մշակվում են առաջարկություններ՝ ապահովելով հետադարձ կապը հաշվետվություններ կայացնող կազմակերպություններին:

Հավելված 2

ՀՀ կառավարության 20 թվականի -ի

N որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԽԹԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Համակատարող	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունքը	Ակնկալվող ֆինանսական միջոցները	
					Գումարը (հազ.դրամ)	Ակնկալվող աղբյուրը
1. Ռազմավարական ուղղություն 1. Առողջ ապրելակերպի ներդրմանն ու իրականացմանն ուղղված գործողությունների կառավարման համակարգի ստեղծում						
1) Նշված ռազմավարության իրականացմանն ուղղված միջոցառումներ՝						
ա. Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված գործողությունները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծում և աշխատակարգի հաստատում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	-	2013 թվական	Գործողությունները ընդհանուր համակարգող միջգերատեսչական հանձնաժողովը և	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության	ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպություններ

				աշխատակարգը ստեղծված է	ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	
բ. Առողջ ապրելակերի խթանմանն ուղղված գործողությունների իրականացման համար մշտական գործող պատասխանատու աշխատանքային խմբի ստեղծում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		2013 թվական	Գործողությունների իրականացման համար մշտական գործող պատասխանատու մարմինը կամ ստորաբաժանու մը ձևավորված է	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետու	ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպություններ

					թյան օրենսդրությա մբ չարգելվող աղբյուրներից	
գ. Նախատեսվող միջոցառումների գործադրման մոնիթորինգի համակարգի ձևավորում և ներդնում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		20 թվական	Գործադրման մոնիթորինգի համակարգը ստեղծված է	Հայաստանի Հանրապետու թյան պետական բյուջեով առողջապահու թյան ոլորտին հատկացվող ուժարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետու թյան օրենսդրությա մբ չարգելվող աղբյուրներից	ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպու թյուններ

դ. Միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ ամենամյա հաշվետվության կազմում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		20 թվական	Ամենամյա հաշվետվությունները կազմված են	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպություններ
Ռազմավարական ուղղություն 2. Առողջության խթանմանը նպաստող օրենսդրության կատարելագործում						
1) Նշված ռազմավարության իրականացմանն ուղղված միջոցառումներ՝						2)
ա. Սոցիալական գովազդի տեղակայման կանոնակարգման վերաբերյալ «Գովազդի	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	20 թվական	Գովազդի մասին», «Լիցենզավորման մասին»,	Հայաստանի Հանրապետության պետական	ՀՀ պետական բյուջե Միջազգային

<p>մասին», «Լիցենզավորման մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխությունների փաթեթի մշակում</p>		<p>ն</p>		<p>«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխությունները իրականացված են</p>	<p>բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ուժարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից</p>	<p>դոնոր կազմակերպություններ</p>
<p>բ. «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխությունների և լրացումների փաթեթի մշակում</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե»</p>	<p>20 թվական</p>	<p>Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը վերանայված է</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ուժարների շրջանակում, ինչպես նաև</p>	<p>ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>

					Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	
գ. Ալկոհոլի գովազդի սահմանափակման նպատակով (արտաքին, հեռուստատեսությամբ և ռադիոյով իրականացվող գովազդի արգելք) «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունների փաթեթի մշակում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	«Հայաստանի Հանրապետության հանրային հեռուստատեսություն»	20 թվական	«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունները կատարված են	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպություններ

<p>դ. Ալկոհոլային խմիչքների չարաշահումը կանխարգելելու նպատակով գործողությունների ծրագրի մշակում</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>		<p>20 թվական</p>	<p>Գործողությունների ծրագիրը մշակված է</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից</p>	<p>ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>
<p>ե. Նախադպրոցական, դպրոցական հաստատություններում գազավորված ըմպելիքների իրացման սահմանափակմանն ուղղված միջոցառումների</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն</p>	<p>20 թվական</p>	<p>Նախադպրոցական, դպրոցական հաստատություններում գազավորված ըմպելիքների</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահու</p>	<p>ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպու</p>

<p>իրականացման նպատակով օրենսդրական բարեփոխումների իրականացում:</p>				<p>իրացման սահմանափակմանն ուղղված իրավական դաշտի կանոնակարգված են</p>	<p>թյան ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից</p>	<p>թյուններ</p>
<p>գ. Ճարպեր, կենդանական յուղեր և մեծ քանակությամբ աղ պարունակող սննդի օգտագործման կարգավորման նպատակով գնային և հարկային քաղաքականության վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մշակում</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե</p>	<p>20 թվական</p>	<p>Իրավական ակտերի նախագծերը մշակված են</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի</p>	<p>ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>

					Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	
է. Կրթական, բուժական և այլ հաստատություններում երեխաների և դեռահասների համար նախատեսվող և իրացվող սննդի ու ըմպելիքների կարգավորման մասով իրավական ակտերի նախագծերի մշակում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի	20 թվական	Իրավական ակտերի նախագծերը մշակված են	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպություններ

<p>ը. Հեռուստատեսությամբ բռնությունը, անառողջ և վտանգավոր ապրելակերպը խթանող հեռուստաֆիլմերի հասանելիության նվազեցմանն ուղղված ինչպես նաև նշված ապրելակերպի ցուցադրման սահմանափակումներին ուղղված իրավական ակտերի նախագծերի մշակում</p>	<p>Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն</p>	<p>Նախարարություն</p> <p>Հեռուստատեսության և ռադիոյի հարցերը կարգավորող հանձնաժողով</p> <p>Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն</p> <p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>20 թվական</p>	<p>Իրավական ակտերի նախագծերը մշակված են</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p> <p>Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>
<p>թ. Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված ծրագրերի կայունությունն ապահովելու նպատակով վերոհիշյալ ծրագրերի</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն</p>	<p>20 թվական</p>	<p>Ֆինանսավորման մեխանիզմների մշակում մշակված են</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p> <p>Միջազգային դոնոր</p>

<p>Ֆինանսավորման մեխանիզմների մշակում</p>		<p>ն</p> <p>Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p> <p>Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>			<p>առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից</p>	<p>կազմակերպություններ</p>
<p>Ռազմավարական ուղղություն 3. Առողջ ապրելակերպի քարոզչությանն ուղղված առողջ ապրելակերպը սատարող մասնագիտացված ծառայությունների զարգացում</p>						
<p>1) Նշված ռազմավարության իրականացմանն ուղղված միջոցառումներ՝</p>						
<p>ա. Ռիսկի գործոնների (օրինակ ծխախոտի, ակոհոլի օգտագործման, ֆիզիկական թերակտիվության, ավելցուկային քաշի</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>		<p>20 թվական</p>	<p>Տեղեկատվական համակարգերը ստեղծված են</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահու</p>	<p>ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպու</p>

<p>տարածվածության) ապրելակերպի վրա ուղղակի և անուղղակի ազդեցություն ունեցող այլ գործոնների, ինչպես նաև համապատասխան մասնագետներ հաշվառման տեղեկատվական համակարգի ստեղծում</p>					<p>թյան ոլորտին հատկացվող ուժանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետու թյան օրենսդրությա մբ չարգելվող աղբյուրներից</p>	<p>թյուններ</p>
<p>բ. Առողջապահության համակարգի աշխատողների, ինչպես նաև մանկավարժների, քաղաքականություն մշակող անձանց և այլ խմբերի կարծիքի ձևավորմանն ուղղված՝ առողջության խթանման վերաբերյալ ուսումնական ծրագրերի մշակում</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Հայաստանի Հանրապետությ ան կրթության և գիտության նախարարությու ն Հայաստանի Հանրապետությ ան մշակույթի նախարարությու ն</p>	<p>20 թվական</p>	<p>Ուսումնական ծրագրերը մշակված են</p>	<p>Հայաստանի Հանրապետու թյան պետական բյուջեով առողջապահու թյան ոլորտին հատկացվող ուժանակում, ինչպես նաև Հայաստանի</p>	<p>ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպու թյուններ</p>

					Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	
գ. Առողջապահության բնագավառի աշխատողների՝ բժիշկների, միջին բուժանձնակազմի, ինչպես նաև ուսուցիչների, համայնքների և սոցիալական ոլորտի աշխատողների վերապատրաստման համար ուսումնական ծրագրերի մշակում	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p> <p>Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն</p> <p>Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	-	20 թվական	Ուսումնական ծրագրերը մշակված են	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	<p>ՀՀ պետական բյուջե</p> <p>Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>
դ. Բժշկական	Հայաստանի		20 թվական	Խորհրդատվակ	Հայաստանի	ՀՀ պետական

<p>հաստատություններում կախվածությունների ախտորոշման սկզբունքների և սնունդ, ալկոհոլ, ֆիզիկական ակտիվ ապրելակերպի տարբեր տարիք և առողջական վիճակ ունեցող անձանց համար խորհրդատվության համակարգերի, ինչպես նաև բուժման ծրագրերի ստեղծում՝ շեշտը դնելով առաջնային բժշկական օգնության հաստատությունների վրա</p>	<p>Հանրապետության առողջապահության նախարարություն</p>			<p>ան և բուժման ծրագրերը մշակված են</p>	<p>Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից</p>	<p>բյուջե Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>
<p>Ե. Ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների օգտագործման հետևանքով առաջացած կախվածության բուժման նորագույն և արդյունավետ մոտեցումների վերաբերյալ չափորոշիչների մշակում</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>		<p>20 թվական</p>	<p>Բուժման նորագույն մեթոդների վերաբերյալ համապատասխան չափորոշիչները մշակված են</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին</p>	<p>ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>

					հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	
զ. Առողջ ապրելակերպը խթանող միջոցառումների մշակում և ներդրում և դրանց ընդգրկում ազգային, առողջապահական այլ ծրագրերում և ռազմավարություններում, այդ թվում՝ առաջնային բուժօգնության, ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխարգելման, ակտիվ լիզմի և թմրամոլության դեմ պայքարի, վերարտադրողական առողջության պահպանման,	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		20 թվական	Միջոցառումները մշակված են և ներդրված են ռազմավարական ծրագրերում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետու	ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպություններ

դեռահասների առողջության պահպանման և այլն					թյան օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	
Ռազմավարական ուղղություն 4. Առողջ ապրելակերպի դրական կողմերի և արդյունավետության ու օգտակարության վերաբերյալ ուսուցում, կադրերի պատրաստում և բնակչության իրազեկում						
1) Նշված ռազմավարության իրականացմանն ուղղված միջոցառումներ`						
ա. Կրթական և լայնհասարակության իրազեկման ծրագրերի մշակում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն	20 թվական	Կադրերի պատրաստման և իրազեկման ծրագրերը ներդրված են	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության	ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպություններ

					մբ չարգելվող աղբյուրներից	
բ. Լայն հասարակայնության, հատկապես բնակչության առանձին խմբերի (կանայք, երեխաներ, երիտասարդներ և այլն) իրազեկում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Շահագրգիռ այլ գերատեսչություններ	20 թվական	Իրազեկման աշխատանքներ և իրականացված են	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպություններ
գ. Համագործակցություն հանրային առողջապահական բնագավառում գործող	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		20 թվական	Համագործակցությունն իրականացված է	Հայաստանի Հանրապետության պետական	ՀՀ պետական բյուջե Միջազգային

<p>հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ և համատեղ հատուկ կրթական ծրագրերի մշակում և իրագործում</p>					<p>բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից</p>	<p>դոնոր կազմակերպություններ</p>
<p>դ. Համագործակցություն զանգվածային լրատվամիջոցների հետ, և նրանց միջոցով իրազեկման միջոցառումների իրականացում, ինչպես նաև իրենց համար հատուկ կրթական ծրագրերի մշակում և իրագործում</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>		<p>20 թվական</p>	<p>Կրթական ծրագրերը մշակված են և համագործակցությունն իրականացված է</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում,</p>	<p>ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>

					ինչպես նաև Հայաստանի Հանրապետու թյան օրենսդրությա մբ չարգելվող աղբյուրներից	
Ե. Մասնավոր և հանրային կառույցների միջև համագործակցության շրջանակների լայնացում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		20 թվական	Ծրագրերը և ուղեցույցները մշակված են	Հայաստանի Հանրապետու թյան պետական բյուջեով առողջապահու թյան ոլորտին հատկացվող ուժարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետու թյան օրենսդրությա մբ չարգելվող	ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպու թյուններ

					աղբյուրներից	
գ. Առողջապարելակերպի, մասնավորապես՝ ֆիզիկական ակտիվության խթանմանն ուղղված միջոցառումների կազմակերպմանն ուղղված ամբտեղական հինքնակառավարման մարմինների հետ համագործակցություն, ինչպես նաև կրեանց համարիատու կծրագրերի և ուղեցույցների մշակում և կիրառում	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	20 թվական	Ծրագիրը և ուղեցույցները մշակված են	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպություններ
է «Դպրոցական սնունդ» ծրագրի մշակում, որն աջակցող ծրագրերի շրջանակներում նախադպրոցական և	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության	20 թվական	«Դպրոցական սնունդ» ծրագիրը մշակված է	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով	ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր

<p>դպրոցական տարիքի երեխաների համար կնախատեսի օրական անհրաժեշտ մթերքներ ստանալու հնարավորություն</p>		<p>նախարարություն</p>			<p>առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից</p>	<p>կազմակերպություններ</p>
<p>ը. Ցորենիալյուրի հարստացման վերաբերյալ սոցիալական մոբիլիզացիայի և հաղորդակցության քարոզարշավի իրականացում</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>		<p>20 թվական</p>	<p>Քարոզարշավն իրականացված է</p>	<p>Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից</p>	<p>Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>
<p>թ. Նորածիններին վաղ տարիքի երեխաների սնուցման հարցերի վերաբերյալ քարոզարշավի իրականացում,</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>		<p>20 թվական</p>	<p>Քարոզարշավն իրականացված է Կրթական կենտրոն</p>	<p>Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող</p>	<p>Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>

ծնողների համար կրթական ծրագրերի հրականացում, խորհրդատվական համակարգի և ծնողների կրթական կենտրոնների ստեղծում				ոնները ստեղծված են	աղբյուրներից	
ժ. Մնուցման հարցերի վերաբերյալ բուժաշխատողների գիտելիքների հզորացում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Տեղական ինքնակառավարման մարմիններ	20 թվական	Բուժաշխատողների գիտելիքները հզորացված են	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	Միջազգային դոնոր կազմակերպություններ
Ռազմավարական ուղղություն 5. Դպրոցներում առողջապարելակերպի խթանում՝ դեռահասների առողջապահական ծառայությունների հզորացման միջոցով						
1) Նշված ռազմավարության իրականացմանն ուղղված միջոցառումներ՝						2)
ա. Դպրոցներում «Առողջապարելակերպ» կրթական ծրագրի հրականացման գնահատում և առաջարկությունների փաթեթի մշակում	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	20 թվական	«Առողջապարելակերպ» կրթական ծրագրի հրականացումը գնահատված է և առաջարկությունների փաթեթը մշակված է	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	Միջազգային դոնոր կազմակերպություններ

բ. Երիտասարդների բարյացակամ ծառայությունների կենտրոնների գործունեության գնահատումն առողջապարելակերպի խթանմանն պատակով առաջարկությունների փաթեթի մշակում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության նախարարություն	20 թվական	Երիտասարդների բարյացակամ ծառայությունների կենտրոնների գործունեությունը գնահատված է և առաջարկությունների փաթեթը մշակված է	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	Միջազգային դոնոր կազմակերպություններ
գ. 2013-2014 թթ-ին դպրոցներում առողջապարելակերպի խթանմանն պատակով ընդհանուր առաջարկական ծառայությունների մոդելի պիլոտային ծրագրի իրականացում	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	20 թվական	Պիլոտային ծրագիրն իրականացված է	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	Միջազգային դոնոր կազմակերպություններ
դ. Դեռահասների առողջապահական ծառայությունների մոդելի պիլոտային ծրագրի գնահատումն ազգային ռազմավարության մշակում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		20 թվական	Պիլոտային ծրագիրը գնահատված է Ազգային ռազմավարությունը մշակված է	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	Միջազգային դոնոր կազմակերպություններ
Ռազմավարական ուղղություն 6. Առողջ ապրելակերպի խթանման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների գործադրման						

մոնիթորինգի համակարգի ձևավորում և ներդրում՝ ապահովելով համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ						
-						
ա. Միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ ամենամյա հաշվետվության կազմում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		20 թվական	Հաշվետվությունները կազմված են	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից	ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպություններ
բ. Իրականացվող ծրագրերի վերաբերյալ կիսամյակային և տարեկան	Հայաստանի Հանրապետության առողջապահության		20 թվական	Ձեկույցները մշակված են և տեղադրված են	Հայաստանի Հանրապետության	ՀՀ պետական բյուջե

<p>զեկույցների պատրաստումն հրապարակում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական կայքէջում</p>	<p>նախարարություն</p>			<p>ՀՀ առողջապահության նախարարության կայքէջում</p>	<p>պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից</p>	<p>Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>
<p>գ. Պարբերաբար օրենսդրության վերլուծության, ռիսկի գործոնների տարածվածության և դրանից բխող հետևանքների գնահատման մասին զեկուցումների կանոնավոր հրապարակում</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>		<p>20 թվական</p>	<p>Ձեկույցները հրապարակված են</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ումարների</p>	<p>ՀՀ պետական բյուջե Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>

					շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետու թյան օրենսդրությա մբ չարգելվող աղբյուրներից	
--	--	--	--	--	--	--